

Դասընթացի անվանումը՝	«ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները զինծառայողների վերաբերյալ գործերով»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների, վերաքննիչ քրեական դատարանի, վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտումներն անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններից սահմանազատելու, զինվորական զանցանքները զինվորական հանցագործություններից տարանջատելու հիմնախընդիրների քննարկմանն ու վերլուծությանը, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ընդունված նախադեպային որոշումներին՝ սույն հարցերի վերաբերյալ: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Ջինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտումների սահմանազատումն անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններից:
- Ջինվորական զանցանքները զինվորական հանցագործություններից տարանջատելու առանձնահատկությունները:
- ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները սույն հարցերի վերաբերյալ:

Դասընթացը վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Սերժիկ Ավետիսյանը: